from neutral zone on first and third days after tremor. The same results have been observed after treatment on fifth day after underground tremor.

Биолог. журн. Армении, 3-4 (49), 1996

УДК 575.24.541.4

ԽԱՂՈՂԻ ՏԱՐԲԵՐ ՍՈՐՏԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԸՍՏ ՓՈՇԵՀԱՏԻԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԵՍՏԻ / Երվանդյան Ս.Գ., Սիմոնյան Ե.Հ., Գալուկյան Մ.Հ. - Խաղողագործության, գինեգործության, պտղագործության հայկական գիտահետազոտական ինստիտուտ - Երևան, 1996 - 8էջ- Մատենագր. 9 ան. - Հայ.- Ավանդ. 8.11.96 N 03 - ՀԿՀ 96

Հայաստանում, ուր խաղողագործությունն ունի մշակության դարավոր ավանդույթներ, տեղական սորտերի հետ մեկտեղ, ներդրվում են նոր մեթոդներով ստացված սորտերը: Շրջանացված սորտերի բջջասաղմնաբանական ուսումնասիրությունը կլրացնի այդ մշակաբույսի բջջագենետիկական բնութագիրը: Այդ առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում փոշեհատիկային վերլուծության տեստի կիրառումը, որը հանդիսանում է արական ամլության և, որոշ իմաստով նաև, ստացված սորտերի պոլիպլոիդության աստիճանի ստուգման լավ մեթոդ:

Ուսումնասիրվել են խաղողի տարբեր ծագման 15 սորտերի փոշեհատիկների որոշ չափանիշները ֆերտիլությունը, փոշեհատիկների ձևը, չափը, հատկանիշների մոդիֆիկացիոն փոփոխականության առանձնահատկությունները: Ստացված տվյալները թույլ են տվել բացահայտելու, որ ծաղկափոշու ֆերտիլությունը համեմատաբար բարձր է տեղական ժողովրդական սելեկցիայի մեթոդով ստացված սորտերի մոտ: Սելեկցիոն նոր սորտերի մոտ ամլության տոկոսը համեմատաբար բարձր է, իսկ միկրոկլոնավորմամբ բազմացվողների մոտ այն գրավել է միջանկյալ տեղ: Չևաբանական ցուցանիշների առումով սորտային տարբերություններ չեն նկատվել, իսկ մոդիֆիկացիոն փոփոխականության թափով առանձնացել են հյուսվածքային կուլտուրայի մեթոդով բազմացվող սորտերը:

Ստացված տվյալները կարող են հետաքրքրություն ներկայացնել սելեկցիոն աշխատանքներում, ծնողական ձևերը ընտրելիս:

Нами изучены некоторые параметры пыльцевых зерен 15 сортов винограда разного происхождения. Выявлено, что уровень фертильности наиболее высокий у аборигенных сортов (сортов народной селекции) и низкий-у селекционно-новых. По этому показателю промежуточное положение занимают сорта, которые размножали с применением методов тканевой культуры. По морфометрическим данным сортовых различий нет, а по размаху модификационной изменчивости выделяются сорта, размноженные путем микроклонирования. Полученные данные могут представлять интерес в селекционных работах, при выборе родительских форм.

Some properties of pollen grains of 15 grape varieties of various origin were studied using pollen analysis test. The original varieties have higher fertility than new hybrid varieties. The varieties propagated *in vitro* through shoot tips occupy the intermediate position. No differences are mentioned by morphometric indices, while the varieties propagated *in vitro* are distinguished by their fluctuation of modificational variability. The obtained data are preliminary and have to be developed as supplementary material in varietal breeding.